ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի մայիսի 9-ից 11-ը

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Ֆելիքս Մելքոնյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության Եվրասիական տնտեսական միության օրենսդրության մեթոդական ապահովման բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2023 թվականի մայիսի 9-ից 11-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

2023 թվականի մայիսի 9-ից 11-ը կայացել է Եվրասիական տնտեսական միության շջանակներում մաքսային կարգավորման խորհրդատվական կոմիտեին կից՝ լիազորված տնտեսական օպերատորի ինստիտուտի կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի հերթական նիստը: Նիստի անցկացման նպատակն էր լիազորված տնտեսական օպերատորի ինստիտուտի կիրառման շրջանակների ընդլայնման նպատակով առանձին պարզեցված ընթացակարգերի սահմանման, գործող ընթացակարգերի կատարելագործման հարցերի, ինչպես նաև լիազորված տնտեսական օպերատորների և լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման համար հավակնող իրավաբանական անձանց հաշվառման համակարգին ներկայացվող շրջանակային պահանջները սահմանող Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագծի քննարկումը:

6. Քննարկված թեմաները՝

Աշխատանքային խմբի նիստի օրակարգում ընդգրկված թեմաներն են՝

1) Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գործող՝ «Եվրասիական տնտեսական միությունում փոխադրումների հետագծման համար նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին» համաձայնագրին համապատասխան՝ նավիգացիոն կապարակնիքների կիրառմամբ փոխադրումների հսկման համար բացառություններ նախատեսող ցանկում (ցանկը պետք է սահմանվի Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշմամբ) լիազորված տնտեսական օպերատորների կողմից փոխադրվող ապրանքների ընդգրկման հարցը.

2) մեկից ավելի ստացողների հասցեներով միևնույն տրանսպորտային միջոցով ապրանքների փոխադրման դեպքում լիազորված տնտեսական օպերատորի կողմից նույնականացման

միջոցների կիրառմանն առնչվող հատուկ պարզեցված ընթացակարգի կիրառման վերաբերյալ հարցը"

3) միջազգային ստանդարտներին համահունչ՝ լիազորված տնտեսական օպերատորների համար նոր հատուկ պարզեցված ընթացակարգերի սահմանման վերաբերյալ ՀՀ առաջարկը.

4) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկմանը հավակնող իրավաբանական անձանց սահմանված պահանջներին համապատասխանության ստուգման գործնական կիրառման հարցեր.

5) լիազորված տնտեսական օպերատորների և լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկմանը հավակնող իրավաբանական անձանց հաշվառման համակարգին ներկայացվող շրջանակային պահանջները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումները տեղի են ունեցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հարթակում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան պաշտոնատար անձանց և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև գործարար համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են քննարկվող հարցերի վերաբերյալ համապատասխան առաջարկներ, դիրքորոշումներ, պարզաբանումներ, ինչի հիման վրա մշակվել են (կմշակվեն) համապատասխան իրավական նորմերը:

Առաջին հարցի շրջանակներում քննարկվել է «Եվրասիական տնտեսական միությունում փոխադրումների հետագծման համար նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին» համաձայնագրին համապատասխան՝ նավիգացիոն կապարակնիքների կիրառմամբ փոխադրումների հսկման համար բացառություններ նախատեսող ցանկում լիազորված տնտեսական օպերատորների կողմից փոխադրվող ապրանքների ընդգրկման վերաբերյալ անդամ պետությունների դիրքորոշումների մոտարկման հնարավորությունը:

Երկրորդ հարցի շրջանակներում քննարկվել է Բելառուսի Հանրապետության նախաձեռնությամբ ներկայացված՝ մեկից ավելի ստացողների հասցեներով միևնույն տրանսպորտային միջոցով ապրանքների փոխադրման դեպքում լիազորված տնտեսական օպերատորի կողմից տրանսպորտային միջոցների նկատմամբ նույնականացման միջոցների կիրառմանն առնչվող հատուկ պարզեցված ընթացակարգի գործնական կիրառման վերաբերյալ նշված պետությունում առկա փորձը և մշակվել է տվյալ հարցին առնչվող իրավակիրարկման միասնական պրակտիկա:

Երրորդ հարցի շրջանակներում քննարկվել են Մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակեցման մասին միջազգային կոնվենցիայի շրջանակային ստանդարտի դրույթներին, Առևտրի դյուրացման մասին համաձայնագրի դրույթներին համապատասխան լիազորված անձանց տրամադրվող պարզեցված ընթացակարգերի հիման վրա Եվրասիական տնտեսական միության շրջանակներում լիազորված տնտեսական օպերատորների համար նոր հատուկ պարզեցված ընթացակարգերի սահմանման և գործող ընթացակարգերի կատարելագործման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացված առաջարկը, որը վերաբերում է որոշակի ժամանակահատվածում իրականացվող ներմուծումների և արտահանումների համար

մեկ հայտարարագրի ներկայացման հնարավորությանը (գործող՝ նախքան հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողման վերաբերյալ դիմումին առնչվող ընթացակարգերի կատարելագործման շրջանակներում), ինչպես նաև լիազորված տնտեսական օպերատորների հաշվառման համակարգին մաքսային մարմինների համար մուտքի տրամադրման եղանակով և հաշվառման համակարգում նշված անձանց կողմից համապատասխան նշում կատարելու եղանակով մաքսային հայտարարագրի ներկայացման հնարավորությանը, որը հետագայում կուղեկցվի լրացուցիչ հայտարարագրի ներկայացմամբ:

Չորրորդ հարցի շրջանակներում քննարկվել են Ղազախստանի Հանրապետության կողմից ներկայացված՝ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման համար հավակնող իրավաբանական անձանց կողմից օրենսդրությամբ սահմանված՝ ռեեստրում ներառման համար պայմանների ապահովվածության ստուգման գործնական կիրառման հարցերը: Մասնավորապես, քննարկվել են այն բոլոր պայմանները, որոնց ապահովվածության ստուգումը կարող է իրականացվել առանց արտագնա մաքսային ստուգման, ինչպես նաև անդամ պետությունների իրավակիրարկման պրակտիկան:

Հինգերորդ հարցի շրջանակներում քննարկվել են լիազորված տնտեսական օպերատորների և լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկմանը հավակնող իրավաբանական անձանց հաշվառման համակարգին ներկայացվող շրջանակային պահանջները սահմանող Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագծի նորմերը (հաշվառման համակարգում տեղեկատվության ձևավորման, տեղեկատվության կազմի, տեղեկատվության պահպանման, մաքսային մարմիններին հասանելիության տրամադրման, հաշվետվությունների ձևավորման հարցեր):

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Աշխատանքային խմբի նիստի արդյունքներն ամփոփվել են համապատասխան արձանագրությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Աշխատանքային խմբի նիստի արդյունքներով՝

1) առաջին հարցի շրջանակներում ձեռք է բերվել նավիգացիոն կապարակնիքների կիրառմամբ փոխադրումների հսկման համար բացառություններ նախատեսող ցանկում լիազորված տնտեսական օպերատորների կողմից փոխադրվող ապրանքների՝ որոշակի ժամանակահատվածով ընդգրկման պայմանավորվածություն՝ հետագայում ըստ գործնական կիրառման արդյունքների ցանկի ճշգրտման նպատակով.

2) երկրորդ հարցի շրջանակներում ձևավորվել են լիազորված տնտեսական օպերատորների կողմից տրանսպորտային միջոցների նկատմամբ նույնականացման միջոցների կիրառման հնարավորության միասնական մոտեցումներ.

3) երրորդ հարցի շրջանակներում ձեռք է բերվել լիազորված տնտեսական օպերատորների համար նոր հատուկ պարզեցված ընթացակարգեր սահմանող Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագծի մշակման, ինչպես նաև գործող պարզեցումների կիրառման

կարգավորումներում համապատասխան փոփոխությունների իրականացման նպատակահարմարության քննարկման պայմանավորվածություն.

4) չորրորդ հարցի շրջանակներում ձեռք է բերվել լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ներառման համար սահմանված պայմանների ապահովվածության ստուգմանն առնչվող հարցերի հետագա քննարկման պայմանավորվածություն՝ ըստ անդամ պետություններում կիրառվող փորձի.

5) հինգերորդ հարցի շրջանակներում մշակվել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագծի համապատասխան նորմերը, նախագիծը նախատեսվում է ուղարկել անդամ պետություններ՝ համաձայնեցման:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Ֆելիքս Մելքոնյան _____

16.05.2023թ.